Չարենցավան համայնքի ղեկավար
Պարոն Հ□ Կ□ Շահգալդյանին

ԶԵԿՈՒՑԱԳԻՐ

Պարոն Հակոբ Շահգալդյան,

**Տեղեկացնում ենք, որ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի եվ սպորտի նախարարի 2022 թ փետրվարի 21-ի N 09-Ն հրամանը՝** Հայաստանի Հանրապետության պետական և համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների օրինակելի հաստիքացուցակը սահմանելու մասին, **Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 29-ի N 1485-Ն որոշումը՝** պետական և համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների վարչական, մանկավարժական եվ ուսումնաօժանդակ կազմի վարձատրության խմբերի դասակարգման չափանիշները սահմանելու մասին և **2024 թվականի նոյեմբերի 5-ի «Հեքիաթ»** մսուր մանկապարտեզ ՀՈԱԿ-ի տնօրենի թիվ **5189/04 գրությունը**, և **2024 թվականի դեկտեմբերի 03-ի «Զանգակ» մսուր մանկապարտեզ ՀՈԱԿ-ի տնօրենի թիվ 5638/04** գրությունը, ըստ որի կատարվել է ուսումնասիրություն և անհրաժեշտություն է առաջացել

1□ **«Հեքիաթ»** մսուր մանկապարտեզ ՀՈԱԿ-ին հատկացնել ՝ 1 հաստիքային միավոր օժանդակ բանվոր:

2□ **«Զանգակ»** մսուր մանկապարտեզ ՀՈԱԿ-ին հատկացնել՝ 1 հաստիքային միավոր խոհարարի օգնական և 0,5 հաստիքային միավոր դռնապան:

**Խնդրում եմ Ձեր համաձայնությունը համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում՝ կատարել անհրաժեշտ փոփոխությունները:**

Համայնքի ղեկավարի տեղակալ՝ Գայանե Գրիգորյան

09 դեկտեմբեր 2024թ□

ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՄՈՒՏՔ-ԵԼՔ ի 03 12 2024թ.
Մուտք N 5626 Թղթ N 04